ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 01 2024 թ.
№ ՊՄՍՊ-24/1-53

«ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00498117)
տնօրեն Ա. Գրիգորյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ե. Թադևոսյան 5շ. 34բն.
էլ. հասցե՝ armtextile77@gmail.com
հեռ. 010 44 43 34

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի միջև 12.05.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-22/6-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 1000 հատ Պաշտպանիչ հանդերձանք (ծնկակապեր) և 2-րդ չափաբաժնով նախատեսված 1000 հատ Պաշտպանիչ հանդերձանք (արմնկակապեր): Սակայն, «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն վերոհիշյալ ապրանքները մատակարարել է 14.11.2023թ.-ին, որոնք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունվարի 26-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **94 080** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 14.11.2023թ. ներառյալ և **29 400** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **1 200 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **1 800 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 02.02.2024թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 02.02.2024թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ